ԿԱՊԿՈՒ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԸՆԹԵՐՑՈՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ (ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ)*

ՀՏԴ 37.022

Մելքոնյան Գայանե
Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան,
Ա. Տեր-Գրիգորյանի անվան մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ
Երևան, Հայաստանի Հանրապետություն
gajanemelkonyan@gmail.com

Հոդվածում ներկայացվում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության ձևավորման գործընթացի վերաբերյալ ուսուցիչների մոտեցումներն ու դիրքորոշումները: Տարրական դպրոցի ուսուցիչների շրջանում մեր իրականացրած հարցախույզի նպատակն էր ի հայտ բերել ԿԱՊԿՈՒ կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողությունների դժվարությունները և ուղենշել դրանց հաղթահարման ձևերն ու հնարները: Ընդգծվել է տարրական դպրոցում սովորող ԿԱՊԿՈՒ աշակերտների ընթերցանության ոլորտի այն թույլ և ուժեղ կողմերը, որոնք դժվարություններ են առաջացնում կարդալու ժամանակ և խոչընդոտ հանդիսանում կարդացած բնագրի ճիշտ և լիարժեք ըմբռնմանը: Վերլուծվել է ուսուցիչների առաջարկած մոտեցումներն ու սկզբունքները, որոնց հիման վրա մշակվել են մեթոդական երաշխավորություններ, որոնք, ըստ իս խթան կհանդիսանան ԿԱՊԿՈՒ կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության դժվարության հաղթահարման գործում, ինչպես նաև այդ կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը, որոնք էլ իրենց հերթին ԿԱՊԿՈՒ կրտսեր դպրոցականների մեջ հետաքրքրություն կառաջացնեն և կմղեն դեպի գիրքը և ընթերցանությունը: Հիմնավորվել է նաև, որ կրտսեր դպրոցի 1-4-րդ դասարաններում ԿԱՊԿՈՒ աշակերտների մոտ պարզ դիպաշարերով բնագրերի, ծանոթ բառապաշարով նյութերի, տրված բնագրի շուրջ դերային խաղերի, ընտրովի ընթերցանության, խաղային մեթոդի և մրցակցային մեթոդի հնարների կիրառումը օգտակար, արդյունավետ և շահեկան կլինի ընթերցողական կարողության ձևավորմանն ու զարգացմանը:

Բանալի բառեր՝ *ԿԱՊԿՈՒ աշակերտ, կրտսեր դպրոցական, ընթերցողական կարողություն, ուսուցման ռազմավարություն, դիրքորոշում, հնար:*

Ներածություն

Ընթերցողական կարողության ձևավորման գործընթացում կրթության ԿԱՊԿՈՒ կրտսեր դպրոցականներին դասավանդող ուսուցիչների դիրքորոշումների բացահայտման նպատակով իրականացրինք հարցախույզ, որին մասնակցեցին ԿԱՊԿՈՒ

*Հոդվածը ներկայացվել է 14.12.2022:
Տպագրության է երաշխավորել մ.գ.դ.,պրոֆեսոր Զ.Գյուլամիրյանը:12.01.2023:
Հոդվածը տպագրության է ընդունվել 27.01.2023:

Երևանի մի շարք դպրոցների 44 ուսուցիչ: Նրանց մոտեցումների, սկզբունքների վերլուծությունների ու եզրահանգումների հիման վրա մեր մշակած մեթոդական երաշխավորությունները կնպաստեն ԿԱՊԿՈՒ կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության դժվարությունների հաղթահարմանը:

Հիմնախնդիրը

ԿԱՊԿՈՒ կրտսեր դպրոցականի ընթերցողական կարողության դժվարությունները և դրանց հաղթահարման հնարները:

Հետազոտության նպատակը

Ի հայտ բերել ԿԱՊԿՈՒ կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության ձեռքբերման գործընթացում առկա դժվարությունները և ներկայացնել դրանց հաղթահարման որոշ ձևեր:

Հետազոտության նորույթը

Կատարված ուսումնասիրության արդյունքների վերլուծության հիման վրա բացահայտեցինք տարրական դպրոցում ԿԱՊԿՈՒ աշակերտների կարդալու կարողության այն թույլ կողմերը, որոնք դժվարություններ են առաջացնում՝ խոչընդոտելով կարդացած նյութի լիարժեք ըմբռնմանը: Հիմնավորել ենք, որ տարրական դասարաններում ԿԱՊԿՈՒ աշակերտների մոտ պարզ դիպաշարերով բնագրերի, ծանոթ բառապաշարով նյութերի, կարդացած բնագրի դիպաշարի շուրջ դերային խաղերի, ընտրովի ընթերցանության, խաղային մեթոդի և մրցակցային մեթոդի հնարների կիրառումը նպաստում է ընթերցողական կարողության զարգացմանը:

Հետազոտության նկարագիրը

ԿԱՊԿՈՒ կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության ձևավորման գործընթացի ուղղությամբ տարրական դպրոցում իրականացվող աշխատանքների ուսումնասիրման նպատակով հետազոտություն իրականացրինք Երևանի մի շարք դպրոցների ուսուցիչների շրջանում:

Հարցախույզին մասնակցել են I - IV դասարաններում դասավանդող 44 ուսուցիչ (նկ. 1):



Նկ. 1 Աշակերտների բաշխվածությունն ըստ դասարանների

Կարևորելով ընթերցանության նյութերի մատչելիությունն ու հասանելիությունը

ԿԱՊԿՈՒ երեխաների համար՝ հարցախույզի առաջին հարցով փորձեցինք պարզել, թե ընթերցանության նյութերն ընտրելիս ուսուցիչն ուսումնառության ինչ ռազմավարությամբ է առաջնորդվում: Հարցախույզի արդյունքները բերված են նկ. 2-ում:

Նկ. 2-ում բերված տրամագրից երևում է, որ ընթերցանության նյութերն ընտրելիս 1-ին և 2-րդ դասարաններում ուսուցիչները կարևորել են «ծանոթ բառապաշարով նյութեր» հնարը (համապատասխանաբար՝ 21,8 % և 23,1 %), իսկ 3-րդ և 4-րդ դասարաններում՝ «պարզ դիպաշարով բնագրեր»-ը (համապատասխանաբար՝ 26,6 % և 20,0 %): Միաժամանակ նշենք, որ 1-ին, 3-րդ և 4-րդ դասարաններում «ընկալելի գաղափարի առկայություն» (1-ին դասարանում՝ 4,3 %, 3-րդ դասարանում՝ 3,3 %), «առավելապես երկխոսություններով դիպաշար» (1-ին դասարանում՝ 4,3 %), «կերպարների հարաբերությունների ընկալելիություն» (4-րդ դասարանում՝ 5,0 %) ձևերին ավելի քիչ կարևորություն է տրվել: 1-ին դասարանի համար «այլ պատասխան» նշվել է «իրեն հարազատ թեմաների ընտրությամբ»-ը (4,3 %):



Նկ. 2 ԿԱՊԿՈՒ երեխաների համար ընթերցանության նյութերի ընտրության ձևերը

Իհարկե, բոլոր նշված ձևերն էլ մեր կարծիքով կարևոր են և կիրառման դեպքում կնպաստեն ԿԱՊԿՈՒ երեխաների ընթերցողական կարողության զարգացմանը:

Գրելու և կարդալու կարողությունների զարգացումը խոսքային գործունեության ձևավորման բարդ ու բազմամակարդակ գործընթացներ են, որոնց իրականացմանը մասնակցում են մի շարք զգայարաններ՝ խոսքալսողական, խոսքաշարժողական, տեսողական, տեսատարածական, ընդհանուր շարժողական: Գիրն ու ընթերցանությունը

համակարգային ֆունկցիաներ են, ուստի այդ համակարգի որևէ օղակի ոչ լիարժեք աշխատանքը հանգեցնում է ամբողջ համակարգի աշխատանքի խանգարմանը[1]:

Հարցաթերթիկի երկրորդ հարցով փորձել ենք պարզել, թե ինչպես կարելի է ապահովել ԿԱՊԿՈՒ երեխաների հասկանալով, սահուն կարդալու կարողության մակարդակը, և ինչ հնարների կիրառման ճանապարհով կարելի է գործընթացը բավարար դարձնել (նկ. 3):

Նկ. 3-ում բերված տրամագրից երևում է, որ ուսուցիչները 1-4-րդ դասարաններում կարևորել են «կարդացած բնագրի դիպաշարի շուրջ դերային խաղեր»-ի (1-ին դասարանում՝ 16,7 %, 2-րդ դասարանում՝ 31,2 %, 3-րդ դասարանում՝ 38,5 %, 4-րդ դասարանում՝ 25,7 %) և «կարդացած ստեղծագործությունների բեմականացում» (1-ին դասարանում՝ 25,0 %, 2-րդ դասարանում ՝ 12,5 %, 3-րդ դասարանում՝ 23,1 %, 4-րդ դասարանում՝ 20,0 %) հնարների կիրառումը: Այս հնարներն իրոք նպաստում են ընթերցողական կարողության զարգացման արդյունավետությանը: Մինչդեռ «կարդացած բնագրի գաղափարի շուրջ բանավեճեր» (3-րդ դասարանում՝ 3,8 %), «խմբային քննարկումներ կերպարների գործունեության շուրջ» (2-րդ դասարանում՝ 6,3 %) և «զույգերով աշխատանք» (2-րդ դասարանում՝ 6,3 %) հնարների կիրառման վերաբերյալ ուսուցիչների դիրքորոշումն այլ է: Այն ինչ գործունեության այս ձևերը մեծապես ապահովում են հաղորդակցական կարողության ձևավորմանը, ավելին՝ նպաստում են սովորողների միջանձնային հարաբերությունների կարգավորմանը, համագործակցային կարողության զարգացմանը: Երրորդ դասարանի համար ուսուցիչները նշել են «խաղային տեխնոլոգիաներ» (3,8 %) «այլ պատասխան»-ը, իսկ 4-րդ դասարանում՝ «վանկախաղեր»-ը (2,9 %) պատասխան տարբերակները: Կարևորում ենք, ընդգծել, որ տրամագրում բերված բոլոր հնարների կիրառումը շատ կարևոր են ընթերցողական կարողության մակարդակի բարձրացման համար:

[1]Սվաջյան Ա.Հ., Ադամյան Հ.Ա., Գարեգինյան Ա.Ա. և ուրիշներ. Ինչպես խթանել ներառումը դասարանում, Մեթոդական ուղեցույց. Ձեռնարկ. - Երևան: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն.- 2021, էջ 38:



Նկ. 3 ԿԱՊԿՈՒ երեխաների հասկանալով, սահուն կարդալու կարողության մակարդակը ապահովող հնարները

Ուղղորդված բարձրաձայն ընթերցանությունը մեծապես նպաստում է աշակերտների սահուն և վարժ կարդալու ունակության զարգացմանը, ինչպես նաև նպաստում է բառապաշարի հարստացմանը: Ուղղորդված ընթերցանությունն իր մեջ ներառում է բարձրաձայն ընթերցանությունը, սահուն ընթերցանության մոդելավորումը: Ուսուցիչը, բարձրաձայն կարդալով, հետաքրքրություն է առաջացնում աշակերտների շրջանում, ինչից հետո շատ հաճախ հաջորդում է քննարկումը տեքստի վերաբերյալ և ամփոփումը, մյուս կողմից՝ գրքին ծանոթ լինելն օգնում է աշակերտներին ավելի հեշտությամբ կարդալ[1]:

Հարցաթերթիկի երրորդ հարցով մենք պարզեցինք, թե որ մեթոդների կիրառումն է առավելապես նպաստում ԿԱՊԿՈՒ կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության զարգացմանը (նկ. 4):

[1]Պետրոսյան Ս. Ներառական կրթությունը գործնականում. Ուսումնամեթոդական ձեռնարկ. - Երևան: 2021, էջ 54:



Նկ. 4 ԿԱՊԿՈՒ երեխաների ընթերցողական կարողության զարգացմանը նպաստող մեթոդները

Նկ. 4-ում բերված տրամագրից երևում է, որ ուսուցիչներն առավելապես կարևորել են «խաղային մեթոդ» հնարը (1-ին դասարանում՝ 35,7 %, 2-րդ դասարանում՝ 41,2 %, 3-րդ դասարանում՝ 54,2 %, 4-րդ դասարանում՝ 44,0 %): Միաժամանակ նշենք, որ «մրցակցային մեթոդ» (1-ին դասարան 28,6 %), «զրույցի մեթոդ» (2-րդ դասարան 23,5 %) և «քարտային աշխատանք» (3-րդ դասարան 20,8 %) հնարները նույնպես ուսուցիչ-ները կարևորել են: Ցավոք, պետք է ընդգծել, որ առավել քիչ ուշադրության են արժա-նացել 1-ին դասարանում՝ «քարտային աշխատանք» (7,1 %), 2-րդ դասարանում՝ «բա-նավեճեր կարդացած ստեղծագործության գաղափարի շուրջ» (5,9 %), 3-րդ դասարա-նում՝ «մրցակցային մեթոդ» (4,3 %) և 4-րդ դասարանում՝ «բանավեճեր կարդացած ստեղծագործության գաղափարի շուրջ» (8,0 %) պատասխան տարբերակները: 4-րդ դասարանում «Այլ պատասխան» հնարում նշվել է նաև «Նկարաշար՝ ելնելով երեխայի կարիքից» պատասխան տարբերակը:

Անառարկելի է, որ ուսուցման գործընթացում կրտսեր դպրոցականների հաղոր-դակցական կարողության ձևավորման արդյունավետությունը պայմանավորված է այդ կարողությունների զարգացմանն ուղղված մեթոդների և միջոցների լիարժեք կիրա-ռությամբ: Կարևոր չէ թե մեկ դասի ընթացքում քանի մեթոդ է կիրառվում, կարևորն այն է, թե ինչպես է կիրառվում, քանի որ դասի արդյունավետությունը պայմանավորված է հնարի մեթոդապես ճիշտ և տեղին կիրառումից[1]:

Հարցախույզի հարցերից մեկի միջոցով փորձեցինք ճշտել, թե ԿԱՊԿՈՒ կրտսեր

[1]Ենոքյան Տ.Վ. Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորմանն ուղղված մեթոդների և միջոցների կարևորությունը // Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի գիտական տեղեկագիր. Հումանիտար գիտություններ.- 2018.- № 1-2, էջ 39:

դպրոցականների ընթերցողական կարողության զարգացմանը նպաստող ինչ խաղային տեխնոլոգիաներ են կիրառում: Հարցման արդյունքներն ըստ դասարանների բերված են աղյուսակ 1-ում: Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ ըստ ուսուցիչների կարծիքի՝ առավել արդյունավետ են համարում քարտային աշխատանքները, դերային խաղերը և վանկախաղերը: Մենք մեր փորձով ևս համոզվել ենք, որ թվարկված խաղային տեխնոլոգիաներն, իրավամբ, նպաստում են սովորողի մտածողության և ընթերցողական կարողության զարգացմանը:

Աղյուսակ 1

ԿԱՊԿՈՒ երեխաների ընթերցողական կարողության զարգացմանը նպաստող խաղային տեխնոլոգիաները

Դասարան	ԿԱՊԿՈՒ երեխաների ընթերցողական կարողության զարգացմանը նպաստող խաղային տեխնոլոգիաներ
1-ին	Քարտային աշխատանքը: Տրված տառերով բառերի կազմումը: Տրված բառերի վանկերի բաժանումը ու դրանց բանկ առ բանկ ընթերցումը:
2-րդ	«Խառնված տառերով» խաղը, որի ժամանակ աշակերտները պետք է կազմեն բառեր ու կարդան: «Խառնված վանկերով» խաղը, որի ժամանակ աշակերտները պետք է գտնեն համապատասխան վանկերը և կազմեն բառ: Դերային խաղեր, Նկար - պատմությունների կիրառում: Ընտրովի ընթերցանություն:
3-րդ	Դերային խաղեր: Քարտային աշխատանքներ: Տրված նկարներով բառերի և բառակապակցությունների կազմումը: Լրացնել պակասող վանկերը:
4-րդ	Վանկային խաղերը: Դիդակտիկ խաղերը: Զարգացնող և դերային խաղեր: Քարտային աշխատանք: Ըստ նկարի գտնել և տեղադրել բաց թողնված բառը: Տառից բառ կազմելու խաղը:

Ուսումնական գործընթացում դիդակտիկ խաղերի կիրառման դեպքում ուսումնական բաղադրիչը համադրվում է հուզականի հետ, և աշակերտները նյութը յուրացնում են՝ զվարճանալով, ակտիվ ներգրավվելով ուսումնական գործընթացում: Այս մոտեցումը խթանում է ուսուցանվող նյութի գիտակցական ընկալումը և գործընթացը դառնում է էլ ավելի հետաքրքիր, հասանելի ու արդյունավետ: Խաղը կարող է օգնել աշակերտներին հաղթահարելու կարդալ սովորելու դժվարությունները [1]:

Հարցախույզի հաջորդ հարցով մենք փորձեցինք պարզել ուսուցիչների և աշա-

[1]Հարությունյան Մ., Պողոսյան Ա., Ավագյան Ա. և ուրիշներ. Ներառական կրթության ռազմավարություն, Դասագիրք.- Երկրորդ հրատարակություն. - Երևան: Ասողիկ, 2020, էջ 155:

կերտների այն դժվարությունները, որոնք առկա են ԿԱՊԿՈՒ կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության զարգացման գործընթացում: Ուսուցիչների պատասխաններն ըստ դասարանների բերված են աղյուսակ 2-ում:

Ըստ ուսուցիչների՝ դժվար է նույն դասարանում միաժամանակ աշխատել երկու խումբ աշակերտների հետ, որովհետև ԿԱՊԿՈՒ աշակերտի հետ աշխատանքը պահանջում է գերլարվածություն, անհատական մոտեցում, բացի դրանից, ուսուցչին անհրաժեշտ են մեթոդական ուղեցույցներ, մասնագետներ, կրթությունը ապահովելու լիարժեք պայմաններ: Ըստ ուսուցիչների, աշակերտների հիմնական դժվարություններից են իրենց իսկ առողջական խնդիրները, դժվար ընկալունակությունն ու կենտրոնացումը: Նշված խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է կիրառել հատուկ մշակված առաջադրանքներ՝ խաղային տեխնոլոգիաների տեսքով, որոնք հույս կներշնչեն ԿԱՊԿՈՒ կրտսեր դպրոցականներին ուսումնական գործունեության մեջ լիարժեք ընդգրկելու հարցում:

Աղյուսակ 2

ԿԱՊԿՈՒ երեխաների ընթերցողական կարողության զարգացման գործընթացում առկա ուսուցիչների և աշակերտների դժվարությունները

Դասարան	ուսուցչի դժվարությունները	աշակերտի դժվարությունները
1-ին	Տեքստերի ճիշտ ընտրության դժվարություն: Գերլարվածությունը: Անհատական մոտեցումները: Թե՛ դպրոցի, թե՛ դասարանի ոչ լիարժեք պայմանները: Յուրաքանչյուր տառը աշակերտին բազմիցս կրկնել տալը: Մի քանի անգամ կարդացած բառի կրկնության հրահանգը:	Արտահայտիչ կարդալու կարողության պակասը: Համապատասխան մասնագետների բացակայությունը: Տառերը հիշելու, համադրելու և կարդալու դժվարությունները:
2-րդ	Աշակերտին կենտրոնացնել: Հիշողության զարգացում: Անհատական մոտեցում: Գերլարվածությունը: Աշակերտի անուշադիր լինելը: Աշակերտների կենտրոնացման բացակայությունը: Աշակերտների տեսողության հետ կապված խնդիրները: Աշակերտների տառաճանաչ չլինելը: Աշակերտը կարդում է դանդաղ և չի պահպանում արտահայտչամիջոցները:	Ուշադրությունը կենտրոնացնելու անբավարար մակարդակը: Երկար նստելու դժվարությունները: Մեթոդական նյութերի պակաս: Հնարավոր է չի հասկանում տեքստի բովանդակությունը, ունի խոսքի հետ կապված դժվարություն: Երկհնչյունների ընթերցման դժվարությունները: Երկշարք, եռաշարք բաղաձայներ: Ըմբռնել դասի թեման:

	Ուսումնական նյութերի բացակայությունը: Մեթոդական ուղեցույցների բացակայությունը: Թեմայի ընտրության բարդությունը: Դասի ժամանակի բաշխման բարդությունը:	
3-րդ	Ժամանակի կորուստը: Դիդակտիկ նյութերի պակասը, աջակցման թիմի համագործակցության անբավարարությունը: Դիտակտիկ նյութերի անբավարարությունը: Գերլարվածություն: Աշակերտների մեծ թվաքանակը դասարանում: Տեքստերի ոչ ճիշտ ընտրություն: Արդյունքի ստացման դանդաղությունը: Ուշադրության կենտրոնացման պակասը: Թեմաների ընտրության թերությունները: Դասաժամի սղությունը:	Դասընկերների հետ համատեղ աշխատելու անկարողությունը: Հաղորդակցման, ադապտացման, հետաքրքրության բացակայությունը: Աշակերտի կենտրոնացման անբավարար մակարդակը: Վարքային դրսևորումների թերությունները: Ընկալելու կարողության անկատարությունը: Միջավայրին հարմարվելու խնդիրը: Երկար ժամանակ դպրոցում անցկացնելը: Աշակերտների թիվը 30 և ավելի: Տեքստերը շատ բարդ են: Չեն կարողանում ճիշտ արտաբերել հնչյունները: Խոսքը զարգացած չէ: Հասկանալ, վերարտադրել լսածը, խոսքը ճիշտ կառուցել: Տառերը ճանաչում են, բայց չեն կարողանում կարդալ: Կենտրոնացման պակասը: ԿԱՊԿՈՒ երեխաները վարժ ընթերցող և արագ տրամաբանող աշակերտների կողքին իրենց ավելի ընկճված են զգում, որն ավելի է խանգարում ընթերցելիս:
4-րդ	Ժամանակի կորուստը: Դժվար բնագրերի յուրացումը: Պարզ բնագրերի առկայություն ըստ դասարանների: Ուսումնադիդակտիկ և զննական պարագաների սակավությունը: Աշակերտին անհատական մոտեցման ցուցաբերման դժվարությունները: Սովորելու ցանկության բացակայությունը:	Ուշադրության կենտրոնացման պակասը: Սահուն կարդալու կարողության անկատարությունը: Կարդալը հասկանալու և ընկալելու ունակության պակասը: Կենտրոնացման բացակայություն ըստ խնդրի: Միջավայրային ոչ բավարար պայմանները: Դիդակտիկ նյութերի

	Ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու դժվարությունը: Ընթերցել մշակույթի պակասը: Դրական հուզական մթնոլորտի ապահովումը: Ուշադրության և հիշողության զարգացումը:	անհամապատասխանությունը: Մշակված, պարզեցված հանձնարարությունների պակասը: Դրական վարք

Հարցախույզի վեցերորդ հարցով ուսուցիչներին հանձնարարել ենք նշել, թե ԿԱՊԿՈՒ կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության զարգացման արդյունավետության բարձրացման ուղղությամբ որոշակի առաջադրանքներ: Հարցման արդյունքներն ըստ դասարանների բերված են աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

ԿԱՊԿՈՒ երեխաների ընթերցողական կարողության զարգացման արդյունավետությունը բարձրացնող ձևերն ըստ ուսուցիչների

Դասարան	ԿԱՊԿՈՒ երեխաների ընթերցողական կարողության զարգացման արդյունավետությունը բարձրացնող ձևեր
1-ին	Նկարների և տեքստերի ճիշտ ընտրություն: Մասնագետների առկայություն: Տառուսուցումն իրականացնել առավել խաղային մեթոդներով: Տեքստը բաժանել փոքր մասերի և փորձել հասկանալով կարդալ:
2-րդ	Մասնագետների առկայություն: Նյութատեխնիկական բազա և պայմաններ: Տուփիկի մեջ լցնել փոքրիկ թղթերի վրա գրված բառեր և առաջարկել հանել և կարդալ, այդ բառերով կազմել նախադասություն: Տեքստի մատչելիություն: Մշակել հստակ առաջադրանքների համակարգ: Բնագրերը զուգորդել գունավոր նկարներով:
3-րդ	Դասանյութի հարմարեցում: Դնել փոքր նպատակ (բնագրի պարզությունը): Տեքստը լինի մատչելի, պարզ և նկարազարդ: Ուսուցումը իրականացնել խաղային տեխնոլոգիաներով: Բարձրացնել աշակերտների ուսումնական դրդապատճառները: Բառերի շարքը վերադասավորել՝ ստանալով կապակցված միտք: Թեմաները համապատասխանեցնել ըստ աշակերտների հետաքրքրության:
4-րդ	Անհատական աշխատանք: Բառային նկարչություն: Դասագրքերում ընդգրկել պարզ բնագրեր: Մատչելի հարցեր, ընտրել տարիքին համապատասխան նյութեր: Գործածել ուսումնադիդակտիկ նյութեր՝ ըստ սովորողների կարիքի: Խաղերի կազմակերպում: Կիրառել խաղային մոտեցումներ: Կիրառել նյութի մատուցման բազմազան միջոցներ (թատրոն, տեսահոլովակ, նկարներ, լեգոներ և այլն)

Աղյուսակ 3-ի տվյալներից երևում է, որ ըստ ուսուցիչների, ԿԱՊԿՈՒ կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության զարգացման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով առավելապես շահեկան է կիրառել այնպիսի առաջադրանքներ, որոնք նրանց մեջ հետաքրքրություն կառաջացնեն և կմղեն դեպի գիրքը և ընթերցանությունը:

Մեր հարցախույզի արդյունքները մեկ անգամ ևս մեզ հանգեցրին այն եզրակացության, որ ուսումնառության կարողության համընդհանուր ձևավորումը մարդու սովորելու կարողության գիտական հիմքերի վրա կազմված գործընթաց է, որը հնարավորություն է տալիս կատարելագործել և առավելագույնս հասանելի դարձնել ուսուցման գործընթացը բոլորի համար[1]:

Եզրակացություն

Այսպիսով, վերլուծելով մեր անցկացրած հարցախույզի արդյունքները՝ հանգեցինք այն եզրակացության, որ չնայած ուսումնական գործընթացում ԿԱՊԿՈՒ աշակերտների ունեցած որոշակի դժվարություններին՝ ուսուցիչների կարծիքով, դասագործընթացում որոշակի տարրական դասարաններում նշված հնարների, մեթոդների և ձևերի կիրառումը ուսուցչին հնարավորություն կտա բացահայտել տարրական դպրոցում սովորող ԿԱՊԿՈՒ աշակերտների ընթերցողական կարողության թույլ և ուժեղ կողմերը, մշակել, փորձարկել և ներկայացնել տարաբնույթ հնարներ, մեթոդներ ու տեխնոլոգիաներ, որոնց կիրառման դեպքում կբարելավվեն ԿԱՊԿՈՒ կրտսեր դպրոցականների կարդալու կարողությունները՝ մեծապես նպաստելով նրանց ընթերցողական կարողության զարգացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Սվաջյան Ա.Հ., Ադամյան Հ.Ա., Գարեգինյան Ա.Ա. և ուրիշներ. Ինչպես խթանել ներառումը դասարանում, Մեթոդական ուղեցույց. Ձեռնարկ. - Երևան: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն:
2. Պետրոսյան Ս. Ներառական կրթությունը գործնականում. Ուսումնամեթոդական ձեռնարկ. - Երևան 2021:
3. Ենոքյան Տ.Վ. Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորմանն ուղղված մեթոդների և միջոցների կարևորությունը // Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի գիտական տեղեկագիր. Հումանիտար գիտություններ.- 2018.- № 1-2:
4. Հարությունյան Մ., Պողոսյան Ա., Ավագյան Ա. և ուրիշներ. Ներառական կրթության ռազմավարություն, Դասագիրք.- Երկրորդ հրատարակություն. - Երևան: Ասողիկ, 2020:
5. Սվաջյան Ա.Հ., Ադամյան Հ.Ա., Գարեգինյան Ա.Ա. և ուրիշներ. Մեթոդական ուղեցույց ուսուցչի օգնականների համար, Ձեռնարկ. - Երևան: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն. էդիթ Պրինտ, 2022:

[1]Սվաջյան Ա.Հ., Ադամյան Հ.Ա., Գարեգինյան Ա.Ա. և ուրիշներ. Մեթոդական ուղեցույց ուսուցչի օգնականների համար, Ձեռնարկ. - Երևան: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն. էդիթ Պրինտ, 2022, էջ 22:

REFERENCES

1. Enoqyan T.V. Krtser dprocakanneri haghordakcakan karoghowt'yownneri d'&avormann owghghvac' met'odneri & mijocneri kar&orowt'yowny' // X.Abovyani anvan petakan mankavarjhakan hamalsarani gitakan teghekagir. Howmanitar gitowt'yownner.- 2018.- № 1-2.- e'j 36-40: [Enokyan T.V. The importance of methods and means aimed at the formation of communication abilities of junior schoolchildren // Scientific Bulletin of the State Pedagogical University named after Kh. Abovyan. Humanities.- 2018.- № 1-2.- p. 36-40.] (in Armenian).
2. Harowt'yownyan M., Poghosyan A., Avagyan A. & owrishner. Nerar'akan krt'owt'yan r'azmavarowt'yown, Dasagirq.- Erkrord hratarakowt'yown. - Er&an: Asoghik, 2020.-312 e'j: [Harutyunyan M., Poghosyan A., Avagyan A. and others. Inclusive Education Strategy, Textbook: Second Edition. - Yerevan: Asoghik, 2020.-312 pages.] (in Armenian).
3. Petrosyan S. Nerar'akan krt'owt'yowny' gorc'nakanowm. Owsowmnamet'odakan d'er'nark. - Er&an: .- 2021.-76 e'j: [Petrosyan S. Inclusive education in practice. Educational manual. - Yerevan: .- 2021.-76 pages.] (in Armenian).
4. Svajyan A.H., Adamyan H.A., Gareginyan A.A. & owrishner. Inchpes xt'anel nerar'owmy' dasaranowm, Met'odakan owghecowyc. D'er'nark. - Er&an: Hanrapetakan mankavarjhahogebanakan kentron.- 2021.-236 e'j: [Svajyan A.H., Adamyan H.A., Gareginyan A.A. and others. How to promote inclusion in the classroom, Methodological guide. Handbook: - Yerevan: Republican Pedagogical Psychological Center.- 2021.-236 pages.] (in Armenian).
5. Svajyan A.H., Adamyan H.A., Gareginyan A.A. & owrishner. Met'odakan owghecowyc owsowcchi o'gnakanneri hamar, D'er'nark. - Er&an: Hanrapetakan mankavarjhahogebanakan kentron. E'dit' Print, 2022.- 96 e'j: [Svajyan A.H., Adamyan H.A., Gareginyan A.A. and others. Methodical guide for teacher assistants, Manual. - Yerevan: Republican Pedagogical Psychological Center. Edith Print, 2022. - 96 pages.] (in Armenian).

РЕЗЮМЕ

ПРОБЛЕМА ФОРМИРОВАНИЯ ЧИТАТЕЛЬНЫХ СПОСОБНОСТЕЙ У УЧАЩИХСЯ ООП В НАЧАЛЬНОЙ ШКОЛЕ (ОБСУЖДЕНИЕ ПОДХОДОВ УЧИТЕЛЕЙ)

Мелконян Гаяне

Армянский государственный педагогический университет имени Хачатура Абовяна,
Соискатель кафедры родного языка и методики его преподавания им. А.Тер-Григоряна
Ереван, Республика Армения

В статье представлены подходы и позиции учителей относительно процесса формирования читательской способности младших школьников с особыми образовательными потребностями (ООП). Цель проведенного нами опроса учителей начальных классов состояла в том, чтобы выявить трудности в читательских способностях учащихся младших классов ООП и указать пути и средства их преодоления. Выделены слабые и сильные стороны читательского поля учащихся ООП, обучающихся в начальной школе, которые вызывают затруднения при чтении и являются препятствием для правильного и полного понимания прочитанного текста. Проанализированы подходы и принципы, предложенные учителями, на

основе которых разработаны методические гарантии, которые, на мой взгляд, будут стимулом в преодолении трудности читательской способности младших школьников ООП, а также в формировании и развитии этих способностей, что в свою очередь вызовет интерес у младших школьников ООП и потянет к книгам и чтению. Также установлено, что использование простых сценариев текстов, материалов со знакомой лексикой, ролевых игр вокруг заданного текста, факультативного чтения, игрового метода и соревновательного метода будет полезным, эффективным и благотворным для формирования и развития читательской способности.

Ключевые слова: ООП ученик, младшая школа, способность к чтению, стратегия обучения, отношение, умение.

SUMMARY

THE PROBLEM OF FORMING THE READING ABILITY OF SEN SCHOOLCHILDREN IN PRIMARY SCHOOL (DISCUSSION OF TEACHERS' APPROACHES)

Melkonyan Gayane

Armenian State Pedagogical University named after Khachatur Abovyan

Applicant of the Chair of Armenian Language and its Teaching Methods after Ashot Ter-Grigoryan

Yerevan, Armenia

The article presents the approaches and positions of teachers regarding the process of forming the reading ability of junior schoolchildren with special educational needs (SEN). The purpose of the survey we conducted among elementary school teachers was to reveal the difficulties in the reading abilities of junior high schoolchildren of SEN and to point out ways and means of overcoming them. The weak and strong aspects of the reading field of SEN schoolchildren studying in elementary school, which cause difficulties during reading and are an obstacle to the correct and full understanding of the read text, have been highlighted. The approaches and principles proposed by the teachers were analyzed, on the basis of which methodological guarantees were developed, which, in my opinion, will be a stimulus in overcoming the difficulty of reading ability of the junior high school schoolchildren of SEN, as well as in the formation and development of these abilities, which in turn will arouse interest in junior schoolchildren of SEN and will be drawn to books and reading. It has also been established that the use of simple script texts, materials with familiar vocabulary, role-plays around the given text, optional reading, game method and competitive method will be useful, effective and beneficial for the formation of reading ability and development.

Keywords: SEN schoolchildren, primary school, reading ability, learning strategy, attitude, skill.